չորս պատերն ես տեսել, սարսա՛ղ: Տանը դագանակ վերցնելը տղամարդութի՞ւն է:

ՈՒՍՏԻԱՆ.– Էդ մի գազ լեզուդ էլ որ չլինի, օրդ ի՞նչ օր է:

ՆԱԶԱՐ.– (Ծոծրակը քորելով եւ հորանջելով) Ասում եմ՝ կռուի գլուխ չունեմ: Հացը հաւաքի ու տեղաշորս գցի: Շուտ քնեմ, շուտ վեր կենամ: Էդուց Չախմախլի սարում Քեռօղլու կռիւն է: Պիտի գնամ:

ՈՒՍՏԻԱՆ.– Լեզո՛ւդ, որ բլբլում է. Էդ լեզուիդ համար, ի՞նչ կա որ… աշխա՛րհք, մարդի՛կ…

ՆԱԶԱՐ.– Աշխա՛րհք, մարդի՛կ… փի՛, բա՛նի անուն տուր: Իսկի ոտիս եղունգն արժե՞ն: Աշխարհքը որ կա՝ իմ գերին է. Էնպէս, բաց եմ թողել, որ գնան իրենց համար ապրեն: Որ ուզենամ ոտիս տակ կգցեմ:

ՈՒՍՏԻԱՆ.– Դու աշխարհքը ոտիդ տակ գցես:

ՆԱԶԱՐ.– Ե՛ս: Դու ինձ մեր գիւղի քոսոտնե՞րը գիտես:

ՈՒՍՏԻԱՆ.– Էս որ իսկի մարդու չի հաւանում՝ էդ եմ տրաքւում, է՛:

ՆԱԶԱՐ.– Տրաքուելը դու էն ժամանակ մտիկ, որ ինձ մեծ փառքերի մէջ նստած կտեսնես:

ՈՒՍՏԻԱՆ.– Երեւելի՛ մարդ ես դառնալու աշխա՛րհք զարմացնես:

ՆԱԶԱՐ.– Սպասի՛, տես, թէ քո ջգրու՝ ո՞նց եմ աշխարհքը քանդելու: Էդ քո ասած երեւելի մարդկերանցից էլ բարձրը պիտի բազմեմ: Ո՞նց ես, որ հիմի վեր կենամ նստեմ աշխարհքի գլխին:

ՈՒՍՏԻԱՆ.– Տո մի տեսէք էս փսլնքոտ քթի տակին ի՛նչ մեծ գոռոզութիւն կայ:

ՆԱԶԱՐ.– Ի՛հ՛ … Ծուլանում եմ, թէ վեր կենամ սրան մի շնաթակ տամ: Ա՛ղջի, ասում եմ ձենդ կտրի՛:

ՈՒՍՏԻԱՆ.– Տես մի մէջքին գալի՞ս է:

ՆԱԶԱՐ.– (Շարժում անելով) Տո դու ո՞ւմ վրայ ես խօսում: (Բայց ծուլանալով) Լա՛ւ, մնա՛ էգուց: (Հանում է չուխան եւ պատրաստւում է քնելու): Ափսոս, որ ինձպէս տղամարդու պատիւը չես իմանում: Քոնն ինչ է՝ նստես ու վրաս վըռվըռաս, էլ չես ասում, թէ ես էնտեղ ինչ բանի եմ: Մի աշխարհք է մտքովս անց կենում: Աշխարհք եմ տալիս, առնում: Էնքան բանը, որ իմ մտքովս անց է կենում, մի պարծանք է քեզ համար, է՛: (Պառկում է: Միջոց: Երազանքով) Կնիկ, ի՞նչ կասես… Մի օր գալիս են, թէ թշնամին վրայ տուեց: Ձօ՛ղք եմ կապում, նստո՛ւմ եմ ձիս, թուրս քաշում, շի՛փ-շիտակ քշում թշնամու վրայ ու կեցցէս Նազար…

ՈՒՍՏԻԱՆ.– (Ամանները դէպի ձախ դուրս է տանում):

ՆԱԶԱՐ.– (Վեր է թռչում) է՛, է՛, է՛… ո՞ւր, ո՞ւր,